## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

## ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/75 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **26 հունիսի 2026թ.**

2026թ. հունիսի 16-ից 26-ը, ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի շենքում տեղի ունեցավ սպորտային պարագաների ձեռքբերման նպատակով ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/75 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

Հ. Կիրակոսյան՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի վարիչ,

Հ. Սարգսյան՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի ավագ դասախոս,

Մ. Գալստյան՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի մասնագետ:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Հ. Կիրակոսյանը, ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ս. Մելքոնյանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից և նիստին էլ մասնակցել են բոլոր երեք անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, որպիսի փաստով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների, աճուրդի առաջարկված մեկնարկային գների և այլ անհրաժեշտ տեղեկությունների մասին:
2. Ընթացակարգին հայտ ներկայացված մասնակիցների և ներկայացված հայտերը գնահատելու մասին:
3. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:
4. Ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներ որոշելու մասին:

5. Համակարգի միջոցով գեներացվող հայտարարություն/ներ/ի, անգործության ժամանակահատված կիրառելու կամ չկիրառելու մասին:

6. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների եվ հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

7. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ, ԱՃՈՒՐԴԻ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2026թ. հունիսի 16-ին, ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի շենքում ժամը 09:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հայտարարեց գնման առարկաների վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը.

ՀՀ դրամ

| Հ/Հ | Գնման առարկայի անվանումը | Աճուրդի մեկնարկային գին | Մեկնարկ | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|
| 1 | Թենիսի սեղան | 125000 | 17.06.2026 09:00 | 170000 |
| 2 | Սեղանի թենիսի գնդաթի | 65000 | 17.06.2026 09:00 | 80000 |
| 3 | Սեղանի թենիսի գնդակ | 15000 | 17.06.2026 09:00 | 15000 |
| 4 | Բասկետբոլի գնդակ N7 | 40000 | 17.06.2026 09:00 | 40000 |
| 5 | Վոլեյբոլի գնդակ N5 | 60000 | 17.06.2026 09:00 | 60000 |
| 6 | Ֆուտզալի գնդակ N4 | 98000 | 17.06.2026 09:00 | 98000 |
| 7 | Օդամղիչ հրացանի փամփուշտ | 28000 | 17.06.2026 09:30 | 28000 |
| 8 | Գնդակի փչող պոմպ | 6000 | 17.06.2026 09:30 | 6000 |
| 9 | Վոլեյբոլի ցանց | 14000 | 17.06.2026 09:30 | 14000 |

Ընթացակարգի հայտերի ներկայացումն ու բացումը, ինչպես նաև՝ հակադարձ աճուրդի անցկացումը նախատեսված էր https://eauction.armeps.am/ կայքի միջոցով՝ հրավերով և համակարգով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցները/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցե, հեռ. | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | «Տիգման Գրուպ» ՍՊԸ | Երևան, Մոլդովական 20, 2.40, +37491919901 | tigmangroup@yandex.ru | 00890518 |
| 2 | «Լիդեր Սպորտ» ՍՊԸ | ք.Երևան Արաբկիր 17 փող.1 տան մոտ, +37491405640 | leadersport@bk.ru | 00154721 |
| 3 | «ՍՄԱՅԼ ԳՐՈՒՊ»ՍՊԸ | ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ Ջոլաքար, 23 փող., 2րդ, +37494930127 | atenders@list.ru | 08419867 |

2026թ. հունիսի 17-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ՝ համակարգի միջոցով գնահատման մեջ ներառված.

1. Հայտերը կազմվել և ներկայացվել են Ընթացակարգի պահանջներին համապատասխան.
2. Ներկայացված հայտերում առկա են Ընթացակարգի հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.
3. Ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են Ընթացակարգի հրավերով սահմանված վավերապայմաններին, բացառությամբ՝

- **«Տիգման Գրուպ»** ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր» փաստաթղթում 1-2-րդ չափաբաժինների մասով բացակայում է հրավերով պահանջվող՝ մակնիշի վերաբերյալ տեղեկատվությունը:
- **«ՍՄԱՅԼ ԳՐՈՒՊ»** ՍՊԸ-ի կողմից Հավելված 1-ով ներկայացվող «ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*» փաստաթուղթը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, փաստաթղթում պատվիրատու է նշված «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն, իսկ ծածկագիրը՝ «ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-26/84», մինչդեռ սույն ընթացակարգով պատվիրատուն հանդիսանում է «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը, իսկ ծածկագիրը՝ «ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/75»: Միաժամանակ, «ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*» փաստաթղթում մասնակիցը հայտնել է 1–2 չափաբաժիններին մասնակցելու ցանկություն, սակայն eAuction համակարգի միջոցով մասնակցության հայտ է ներկայացրել 1–9-րդ չափաբաժինների մասով: Բացակայում է նաև Հավելված 1.3-ով ներկայացվող «Իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվություն պարունակող» փաստաթուղթը, իսկ ներկայացված «Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում» 7-րդ չափաբաժնի մասով բացակայում են հրավերով պահանջվող՝ առաջարկվող ապրանքի ֆիրմային անվանման, ապրանքային նշանի, մակնիշի և արտադրողի անվանման վերաբերյալ տվյալները, ինչպես նաև տեխնիկական բնութագիրը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2026թ. հունիսի 17-ին, Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների նախնական և վերջնական գնային առաջարկները.

Ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների՝ ընտրված լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

ՀՀ դրամ

| Չ/Հ | Զբաղեցրած տեղ | Ներկայացված հայտեր | Նախահաշվային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Կարգավիճակ/ը ազդում է հայտերի գնահատման վերջնարդյունքում/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | Ընտրված մասնակից «X» |
| 1 | 1 | «Տիգման Գրուպ» ՍՊԸ | 1700000 | 1250000 | 20% | 1500000 | 1250000 | 20% | 1500000 | X |
| 1 | 2 | «Լիդեր Սպորտ» ՍՊԸ | 1700000 | 1700000 | 0% | 1700000 | 1700000 | 0% | 1700000 | |
| 1 | 3 | «ՍՄԱՅԼ ԳՐՈՒՊ »ՍՊԸ | 1700000 | 5550000000 | 20% | 6660000000 | 5550000000 | 20% | 6660000000 | Մերժված |
| 2 | 1 | «Տիգման Գրուպ» ՍՊԸ | 800000 | 650000 | 20% | 780000 | 41200 | 20% | 49440 | X |
| 2 | 2 | «Լիդեր Սպորտ» ՍՊԸ | 800000 | 800000 | 0% | 800000 | 500000 | 0% | 500000 | |
| 2 | 3 | «ՍՄԱՅԼ ԳՐՈՒՊ »ՍՊԸ | 800000 | 5550000000 | 20% | 6660000000 | 55000 | 20% | 66000 | |
| 3 | 1 | «Լիդեր Սպորտ» ՍՊԸ | 150000 | 150000 | 0% | 150000 | 10000 | 0% | 10000 | X |
| 3 | 2 | «ՍՄԱՅԼ ԳՐՈՒՊ »ՍՊԸ | 150000 | 5550000000 | 20% | 6660000000 | 11000 | 20% | 13200 | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4 | 1 | «Լիդեր Սպորտ» ՍՊԸ | 40000 | 40000 | 0% | 40000 | 22000 | 0% | 22000 | X |
| 4 | 2 | «ՍՄԱՅԼ ԳՐՈՒՊ »ՍՊԸ | 40000 | 555000000 | 20% | 666000000 | 30000 | 20% | 36000 | |
| 5 | 1 | «Լիդեր Սպորտ» ՍՊԸ | 60000 | 60000 | 0% | 60000 | 34400 | 0% | 34400 | X |
| 5 | 2 | «ՍՄԱՅԼ ԳՐՈՒՊ »ՍՊԸ | 60000 | 555000000 | 20% | 666000000 | 35000 | 20% | 42000 | |
| 6 | 1 | «Լիդեր Սպորտ» ՍՊԸ | 98000 | 98000 | 0% | 98000 | 42000 | 0% | 42000 | X |
| 6 | 2 | «ՍՄԱՅԼ ԳՐՈՒՊ »ՍՊԸ | 98000 | 555000000 | 20% | 666000000 | 70000 | 20% | 90000 | |
| 7 | 1 | «ՍՄԱՅԼ ԳՐՈՒՊ »ՍՊԸ | 28000 | 555000000 | 20% | 666000000 | 22000 | 20% | 26400 | X |
| 7 | 2 | «Լիդեր Սպորտ» ՍՊԸ | 28000 | 28000 | 0% | 28000 | 28000 | 0% | 28000 | |
| 8 | 1 | «Լիդեր Սպորտ» ՍՊԸ | 6000 | 6000 | 0% | 6000 | 5000 | 0% | 5000 | X |
| 8 | 2 | «ՍՄԱՅԼ ԳՐՈՒՊ »ՍՊԸ | 6000 | 5.55000000 555e19 | 20% | 0 | 5.55000000 555e19 | 20% | | |
| 9 | 1 | «Լիդեր Սպորտ» ՍՊԸ | 14000 | 14000 | 0% | 14000 | 9000 | 0% | 9000 | X |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 9 | 2 | «ՍՄԱՅԼ ԳՐՈՒՊ »ՍՊԸ | 14000 | 5550000000 | 20% | 6660000000 | 11000 | 20% | 13200 | |

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

2026թ. հունիսի 18-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:

2. Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել Մասնակից/ներ/ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել շտկման ենթակա արձանագրված անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

2026թ. հունիսի 22-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. Մասնակից/ներ/ի կողմից սահմանված ժամկետներում ներկայացվել են հանձնաժողովի կողմից արձանագրված թերությունների շտկված տարբերակները:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

2026թ. հունիսի 26-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:

2. Համակարգի կողմից գնահատման մեջ ներառված հայտերի գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

3. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Գնահատման մեջ ներառված մասնակցի անվանումը* | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1-2-րդ | «Տիգման Գրուպ» ՍՊԸ | բավարար |
| 3-6-րդ, 8-9-րդ | «Լիդեր Սպորտ» ՍՊԸ | բավարար |
| 7-րդ | «ՍՄԱՅԼ ԳՐՈՒՊ»ՍՊԸ | բավարար |

*Գնահատվում են միայն մասնակիցների կողմից ներկայացված այն հայտերը, որոնք համակարգի կողմից ներառվել են գնահատման ենթակա հայտերի մեջ:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 4. ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով վերոնշյալը, 2026թ. հունիսի 26-ին Հանձնաժողովը որոշեց, Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և այդպիսին չճանաչված մասնակից հայտարարել սույն արձանագրության 3-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ իրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած

Մասնակիցների թվից այն մասնակիցներին, ովքեր ներկայացրել են նվազագույն գնային առաջարկ:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 5. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳԵՆԵՐԱՑՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ/ՆԵՐ/Ի և ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՄ ՉԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Ս. Մելքոնյանը ներկայացրեց գնահատող հանձնաժողովի կողմից իրականացված գնահատումների արդյունքում՝ համակարգի կողմից տրամադրված հայտարարությունների տեքստերը:

2026թ. հունիսի 26-ին, Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել Ընթացակարգի շրջանակում հրապարակվող հայտարարություն/ներ/ը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
2. Հաստատել համակարգի կողմից տրամադրված հայտարարության տեքստերը:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 6. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:
2. Գնման վերաբերյալ հարցումներ չեն եղել և պարզաբանումներ չեն պահանջվել:
3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց համակարգի կողմից տրամադրված պայմանագրերի նախագծերը:

Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել համակարգի կողմից տրամադրված պայմանագր/եր/ի նախագ/ի/ծ/եր/ը,
2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակիցներին համակարգի միջոցով ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը,

միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ սահմանված ժամկետում պայմանագիրը չստորագրելու, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում մասնակիցը կզրկվի պայմանագիրը կնքելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Հ. Կիրակոսյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Հ. Սարգսյան ____________

Մ. Գալստյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Ս. Մելքոնյան ____________